



ԵՐԾՈՒՄ

ՀԱՅԿԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ

ԹՈՒՄՅԵԱՆ, ՀԵՅԲԵՆԼԱՄԵՐ ԹԵՒՕՔ
ԲԱՐԾՐԱՆԻ ԳԼԽԻՆ Ի ՎԱՆՏԱՍՊ

ԹԻՒ Զ — ՏՈՒՂԻՍ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԿՈՍՏԱՆՒՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԵՐԱՆԻ ԵՐԵՅ ԵՂԲԱՐՅ ԱՐԱՊԵԱՆ

1855 — ՌՅԴ



ԵՐԾՈՒՒ
ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՅԵԱԼ ՀԱՅՐԵԱՍԷՐ ԹԵՒՕՔ
ՅԱՐԾՐՈՒՆԻ ԳԱՀԷՆ Ի ՎԱՆՏՈՍՊ
ԹԻՒ 2 — ՅՈՒԼԻՍ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՐԻՑ ԵՂԲԱՐՑ ԱՐԱՊԵԱՆ


1855 = ՌՅԴ

1795

THE ...

THE ...

THE ...



ԱՐՇՈՒԻ

ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՄՅԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԹԵՒՕՔ

ՅԱՐԾՐՈՒՆԻ ԳԱՀԷՆ Ի ՎԱՆՑՈՍՊ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 2

1855

ՅՈՒԼԻՍ

ԲԱՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ՃԱՌ

Ի ԳԵՐԱՀՐԱԸ ՊԱՅԺԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

Ի ԹԱԲՕՐԱԿԱՆ ԼԵՐԻՆ ԳԱԼԵԱՑԻՈՑ

ԱՐՇՈՒՐ՝ կաց աւասիկ առեալ զտասնադէրք, ու յայտնագողչակ տեսնողդ Դաւիթ, հրաւեր կարդալ իրանց Թափօրայ եւ Հերմօնի ցընծալ եւ զուարճանալ ընդ նորահրաշերեւումն փառաց Յիսուսի, ընդ իմանալի Արեգակն ինքնածագ, որ

այսօր յայտնի պրանչելապէս 'ի գլուխ լերինն Թափօր: Չայն տուր նոր Խորայէլեան ժողովրդոց հանուր հեթանոսաց մեղմախօս նուագաւդ, աներկիւղ դիմել ելանել 'ի գլուխ հրաշատես վարդապետակ լերինս եւ մի ըստ օրինակի հնոյն Խորայէլեան բա-

Նակին առ ստորոտով Սինայի կացեալ՝ դողալով զարհուրիլ 'ի ձայնէ ահագնագոչ փողոյն եւ 'ի հնչմանէ ահաւոր բարբառոյն , այլ հուպ եղեալ ըստ Մովսիսի՝ տեսանել հաւատոյ աչօք զաստուածահրաշ լուսափայլ տիպար նորոյն Մովսիսի . որ զանվայրափակ լոյսն աստուածութեանն . զոր անտեսաբար թագուցանէր ընդ քողով մարմնոյն , ով մեծի սքանչելեացս , այսօր հրաշիւք իմն արտափայլեալ՝ արգել բնաւին զճառագայթս զգալի արեւուն : Նորմէ ահիւ զարհուրեալ ընտրեալ երից աշակերտացն զաչս իւրեանց զգետնով մածանէին :

Այդ զի՞ քեզ , Պէտրէ , ընդէր դարձուցանես զաչս քո եւ չհայիս տենչանօք յառատութեան պատկերն Հօր եւ 'ի ճշգրիտ նկարագիր էութեան նորին : Դաւիթն այն անդուստ մաղթէ ցանկանալով , « Աստուած , ողորմեա մեզ եւ օրհնեա ըզմեզ երեւեցո զերեսս քո 'ի մեզ եւ ողորմեա մեզ » , աւասիկ լուսահրաշ երեսն այն կեցուցիչ , աւասիկ ծագումն եւ ճաճաչն Աստուածեղէն զօրութեանն : Աչք ամենեցուն հայել սիրեն յակնապարար նշոյլս երեւելի արեգականս , դու վասն էր սարսափիս հայել ընդ հայրածագ արեգակն Յիսուս , որ լոյս աշխարհի եկն , Արդ 'ի վեր առ զգլուխդ , ծանրացեալդ քնով , յակճիռս եղեալ յառեաց ընդ գեղ վարդապետիդ եւ գուարճացիր , տես թէ կարնս ճանաչել , զիք են արքն այնոքիկ , որ հուպ յաջմէ եւ յահեկէ կացեալ խօսին ընդ նմա , մի գուցէ Մովսէս եւ Եղիա իցեն : Այն , մինն 'ի մեռելոց

հրաշիւք իմն յարուցեալ եւ միւսն՝ յերկնուստ անտի վայրաբերեալ , որք աղերս մատուցեալ ծառայաբար՝ խօսին զհանդերձեալ խորհրդոյ խաչին վաղ կատարել եւ ընդ զնախագուշակ բանս նոցին : Անդ քաջալերեալ Մովսէսն այն օրէնադիրն Իսրայէլի ասէր ուրախալից : Օրհնեալ է այդ խոնարհ գալուստ քո , փրկիչ , որ երեւիս այժմ , ոչ մառախլով կամ սաստիկ միգով ուրպէս 'ի գլուխ լերին Սինէական . յորմէ ես ծառայ քո պակուցեալ սասանէի : Ո՛վ , ցնծամ ես յաւէտ ընդ նոր այդ երեւումն աստուածահրաշ զիմացդ եւ լցաւ աւասիկ փափագ անձկաւէտ սրտիս : Անդ այնչափ թախանձելով՝ հազիւ կարացի նշմարել ըզյետոյսդ քո միայն , վաշ , այժմիկ յանդիման կամ եւ հայիմ յերեսս քոյին լուսաճաճանչ : Միթէ իբրուզողայ որ խաբեցեր զիս անդէն . քանզի ասէիր թէ ոչ որ կարէ տեսանել զերեսս իմ եւ ապրիւ արդ ճրպէս կեցուցիչ եղեր տեսեամբդ : Անդ զգողանի հարեալ զարհուրէի , իսկ աստ քաջալերիմ սրտապնդեալ : « Եւ եւ » ոչ իբրու 'ի գլուխ լերին քորեբայ 'ի բացուստ հիանշմար լինիմ . այլ հուպ եղեալ 'ի մօտուստ նկատեմ զհուրդ Աստուածային . որ այդպէս այսօր տեսանի վառեալ 'ի մօրենի կուսական մարմնոյդ . զոր , բաբէ , անհաս զօրութեամբդ գիտես պահել դու զայդ՝ անկեզ : Այն , տէր , հաւատամ աներկբայ , դու իսկ ես Մարգարէն յարուցեալ 'ի հօր տանէն Յուդայի ըստ գուշակութեան ծառայիս : Այլ , աւանդ , որ ոչ լուսել կամին քեզ ուրիշն թիւր եւ ա-

րատոյ , ժողովուրդն յիմար եւ ոչ
խմաստուն եւ չածեն յուշ երբէք
զանբաւ բարիսն պարգեւեալ նոցա
’ի քէն : Որ կողոպտեալ զազգն ա-
նագորոյն՝ զգեցուցեր զնոսին եւ
բազկաւ զօրութեան հաներ յԵգիպ-
տոսէն : Որ արծուապէս ’ի թեւս ըն-
կալար եւ ’ի վերայ միջնողացդ գորու-
վաբար կրեալ՝ անցուցեր ընդ անհուն
անապատն եւ հասուցեր յերկիրն ա-
ւետեաց . ուր ’ի մեղը եւ ’ի կաթն
եւ յիւղ կոխուց եւ արդեամբք ան-
դատանաց զիեցուցեր զնոսին առա-
տապէս . մինչեւ եկեր Յակովբ եւ
յազեցաւ կշտապինդ : Այլ , ո՛հ ,
աւասիկ ընդ բովանդակ բարեացն
այն՝ իբրու զծի ապերասան զօրինաց
քոյին կոտորեալ զանձ՝ կիցս արձակ-
եալ անկուշէլ յանդգնի զսրերէդ
խաչին ոտիւք : Ս’ի դու սրտմտիր
ընդ այս , ո՛վ պարիչդ իմ հեզ , համ-
բեր քոյին ներողամտութեամբք եւ
թող զյանցանս որդւոցն անհաւա-
նութեան , որպէս յայնժամ ներէիր
քաղցրութեամբք մինչ յերեսս ան-
կեալ աղաչէի : Օ նոյն աղբրս եւ
արդ առաջի փրկչիդ անկեալ հե-
ղում աստէն , մի այժմ , այլ յաւ-
ուր վրէժխնդրութեան առցեն ’ի
քէն զհատուցումն . զի ոչ իբրեւ
ծառայս պատուհասիչ Աստուած եւ
դար Փարաւօնի տասն հարուածովք
տանջել զԵգիպտոս , այլ ’ի սիրոյ
հօրէն փրկիչ եւ ազատիչ շնորհեցար
հանուր աշխարհի յերկրի երեւեալ
մարմնովք խոնարհակերպ : Վեզ
արժան է աւասիկ փութալ բարձրա-
նալ սիրով ’ի ծայր ձողոյ խաչին , ընդ
որ հայեցեալ բժշկեցին վիրաւոր-
եալ մարդկային ազգ : Որ քարոզե-

ցեր ժողովրդեան քո , թէ որպէս
բարձրացոյց Մովսէս զօճն յանապա-
տի , նոյնպէս եւ բարձրանալ պարտ է
որդւոյ մարդոյ :

Այդ բարձրացիր , ո՛վ խոնարհեալդ
’ի բարձրութենէ փառաց երկնից ,
բարձրացիր տարածմամբ թեւոցդ ,
զի զհեռացեալս յԱստուածգիտու-
թենէ՝ ժողովեալ առ քեզ ձգեացես
եւ հուր ’ի բարկութենէ Հօր բոր-
բոքեալ յերկնոստ անտի՝ պրեացես
եւ իջես ’ի դժոխս ներքինս ազա-
տել զգերեալքս ’ի մահուն ձեռանէ :
Փութամ ես եւ աւետեմ սպասող
նախահարցն եւ մարդարէլցն՝ քա-
լողեալ նոցին զեկեալ հասեալ ըզ-
փրկութիւնդ : Օ այս օրինակ խօս-
եալ Մովսիս լռէր անդէն , եւ Հե-
ղիաս կցէր ընդ նմին զբանս իւր
այսպէս :

Աստուածդ իմ նախանձաւոր , որ
յայնժամ վասն փախուցելոյս յԱքա-
եաբէ հարցանէիր տիրաբար ’ի ծա-
ռայէս , թէ զի՞ կաս աստ , Եղիա ,
զնոյն բան եւ արդ դարձուցեալ առ
Տէքդ՝ հարցանեմ ծառայաբար , թէ
զի՞ կաս աստ ’ի կատար թափօրական
լերինս թողեալ զԳողգոթա . եւ զի՞
այդ նորահրաշ տեսիլ կերպարանիդ :
Ի բարձու գլուխ Բորբայ մինչ
յայրի անդ կայի միայնակ , մեղմա-
խառն հեզիկ օդովն երեւցար . մի թէ
օրինակ էր այն մարմնոյդ այդմիկ խո-
նարհակերպ : Չեւ հասեալ տակա-
ւին ժամանակ դալտեան իմոյ , ըն-
դէր տարածում ածեր զիս աստ , ո՛վ
Տէր : Ս’այելնչ է իսկ նախապէս
ընուլ փրկչիդ զփրկական պաշտօն
խաչին եւ յաղթական փառօք համ-
բառնալ յերկինս , ոչ իբրու զիս հը-

քեզէն կառաց կարօտեալ . այլ նոր հրաշային կառօք մարմնոյդ ինքնազօր վերամբարձեալ . յետ այնորիկ հանդերձիմ ես գալ եւ կարապետ լինել կրկնակի դալստեանդ եւ ի վէմդ անշարժելի հաստատել . յայնժամ զիս լայելեան ազգն , որ արդ ՚ի նուազ նախկին դալստեանդ , ո՛հ , անարդիս ՚ի նոցունց իբրեւ անպիտան :

Այլ որ մարմնառիկ տնօրէնութեամբդ երեւեցար յերկնուստ ամպ անձրեւաձիր եւ իբրեւ զթագ առն վերառեալ զըւր ՚ի համատարած սիւրոյ հայրական ծովուն , էջ աղաչեմ , ո՛վ տէր , էջ եւ ցօղեա առատահոս գթութեամբդ , ոչ միայն ՚ի վերայ երաշտացեալ երկրին չրէաստանի . յոր ոչ անձրեւեցեր զերիս ամս՝ բանիւ իմով փակեալ զերկինս . այլ եւ ՚ի վերայ հանուր աշխարհի , որ կիզեալ տալորի տապով կռամոլութեան : Որ ետուր զօրութիւն ծառայի քո նուազագոյն շնչովս կեանս շնորհել մանկանն մեռելոյ . իսկ դու , որ տէր ես եւ պարգեւիչ կենդանութեան . շնչեա հոգւովդ Աստուածային արդ ՚ի մեռեալ բնութիւնս մարդկան , զի վերստին նոր շունչ զգեցեալ՝ կենդանասցի անդրէն փշմամբ շնորհաձիր շնչոյդ : Սայսչափ խօսեալ եղիայի՝ վերանայր անդէն յերկինս . այլ Մովսիսի ցաւ էր եւ կսկիւն անհնարին դառնալ վերստին ՚ի բանտն եւ կալ ընդ իշխանութեամբ խաւարին , փոքր ինչ վայելեալ զուրախութիւն տեսեամբ պայծառահրաշ զիմացն Աստուածորդւոյն :

Ի ուսիր արդ , Պէտրէ , զիւրդ երկոքին աստուածատես մարգարէք աղերս արկեալ ստիպեն զտէրն թողուլ

առ այժմ զփառս Թափօրական լերինս եւ բարձեալ զհաչն ելանել ՚ի Գողգոթա . զի՞ եղեւ քեզ , հակառակ երկոցունցս բանս բերել ՚ի մէջ ասեւով . «Տէր , բարեօք է մեզ աստ լինել , թէ հաճոյ է քումդ կամաց՝ արասցուք երիս տաղաւարս , Քեզ , Մովսիսի եւ Եղիայի . մեզ չեն պիտոյ , զի բացօթեայ մերկամարմին կրթեալ եմք ծովափաստակ աշխատութեամբ . քաղցր է մեզ ՚ի գիշերի անմահի՜ւ ՚ի վերայ ցօղաթուրմ գետնոյ հանգչել եւ ՚ի տունընջեան առանց հովանեաց արեւակէզ լինել եւ իբրեւ ծառայ կամակատար սպասաւորել երեցունցդ աստէն : Ոչ միայն մեզ եւ եթ ըղձալի է յերկնահրաշ վայրիս օթագայիլ . այլ յաւէտ եւս Մովսիսիդ եւ Եղիայիդ , որք սովորութեամբ կրթեցան միշտ լեռնակեցիկ լինել . մինդ ՚ի սրամտութենէ Փարաւոնին՝ փախուցեալ՝ զքառասուն ամ ընտրեաց զանգրաղ կեանս հովուական , եւ միւսն յանդգամ բարկութենէ Եզաբելայ խուսափեալ ՚ի լեռն Աստուծոյ Քորէբ՝ զասպնջականութիւն այրին ընկալաւ : Իսկ դու , ո՛վ Աստուածորդիդ հեղ , որ միշտ նեղիս եւ տագնասպիս ՚ի նախանձուէ՝ դըպրաց եւ փարիսեցւոց , ընդէր խնդրես կալ ՚ի միջի ապաշնորհացն եւ վարդիդ չքնաղ վառեալ լուսով դերասրաշ՝ ՚ի մէջ խոցոտիչ փշոցն երեւիլ : Ո՛ր ան որոյ արժան է երկնաւոր վարդապետիդ մերոյ . ՚ի բաց կալ ՚ի նենգութենէ նոցին . որով եւ մեք աշաւ կերտքս ազատ լիցուք բնաւ ՚ի նախատանաց նոցուն , եւ յերկրաւոր պէս պէս աղէտից զերծեալ՝ աստանօր յամենայն ժամ եւ ընդ ծագումն փաւ

ապրիլ արիւրաւոր յազիւ հոգեղո՛ւ
ուարձ սրտիւ : Ո՛վ որպէ՛ս զի քաղ-
ցրը եւ անոր թելի է մեզ լուսասփիւռ
գաղաթ երկնասարաս լերինս . որ մինչ-
չեւ ճաշակեալ զմահ՝ տեսանեմք
աւասիկ եկեալ հասեալ աստանօր :

Ի ռեաց , պէտրէ , զի՞ իբրեւ արեւ
եալ այլ ընդ այլոյ խօսիս հակառակ
Հօրն կամաց . լուր զի՛նչ հրամայէ 'ի
վերուստ անտի , « Դա է որդի իմ , դը-
մա լուարուք : Օ արմա՛նք , զի՞ վաղ
մոռացար զառաջին յանդիմանու-
թիւնն . որով իբրեւ աստանա կշտամ-
բեցար 'ի խաչասէր որդւոյս , ո՛վ պետ-
րէ . եւ զի՞ այդ համարձակութիւն
քեզ , այդպէս խոչընդոտն լինել քաջ
նահատակիդ իմոյ , որ ինքնին սիրէ
խաղալ յասպարէզ գողգոթայ լերին
երիւարաւ խաչին սորչաւեալ : Գիւ-
տեմ , զայդպիսի հակառակ ազդումն
չառեր յինէն , այլ 'ի հօրէն չարու-
թեան , որով իբրեւ վարժապետ եւ
ուսուցիչ ձեւանաս երկնառաք վար-
դապետիդ եւ դիմակաց լինիս ընթա-
ցողիդ սիրով 'ի ճանապարհս խաչին
իբրու թէ 'ի սիրոյ . ստիպեալ զայդ
առնես : Այս իսկ է յաւեա զար-
մանք , ձկնորս գողով արուեստիւդ , ըզ-
տաղաւարաշինութենէ բռնն հար-
կանես եւ իմաստուն ճարտարապետ
իմն երեւեալ աստ . յանարգ նիւթոց
զանշուք ցածուն խրճիթս լեռնա-
բնակաց կազմել յանձն առնուս այնմ ,
որ 'ի խորանս երկնից լայնակամար
'ի ծոց հօրս ծնողի պարագրի միայն :
Ո՞ւմ պատրաստեցից ապա զանձեւ
ազործ շինուած լուսանիւթ տա-
ճարաց եւ զբազում օթեւանս երկ-
նակառօց , մինչ այդպէս դու 'ի
թափօրական լերինդ զմշտնջենաւոր

տուն իմն բնակութեան հաստատել
ջանաս եւ ոչ փափագիս զբնակու-
թիւն երկնից զգե՛նուլ : Չեռն իմ
ամենարուեստ չկարօտի երբէք նո-
ւաստակերտ տաղաւարիդ , զոր սիրել-
ւոյդ իմոյ շինել խոստանաս . ահա
լուսարփի ամպայարմար վրան իմն 'ի
վերուստ սքանչելապէս ածեալ հովա-
նի առնեմ 'ի վերայ ճառագայթա-
հար աչացդ . զի համարձակ հայել
կարացես ընդ հրաշափառութիւն
դիմաց միածնի որդւոյս : Այժմիկ
ընդ երեւումն դոյզն ինչ առհաւատ
չեայ փառացդ , այդչափ զմայլեալ
ուշամոռաց լինիս , զի՛նչ ապա , յոր-
ժամ մեծ եւ անձառ փառօք տես-
ջիւք զդա եկեալ ընդ ամպս երկնից :

Օ՛ն արի կաց 'ի թմրութենէդ ,
քեզ ասեմ , Պէտրէ , թէ ցանկաս
հաղորդ լինիլ այդպիսում ճաշխարհիկ
փառաց , եջ ուրեմն եւ հետեւեաց
խաչակիր վարդապետիդ հետոց 'ի
լեառն Գողգոթայ . անդ եթէ ընդ
նմին խաչակից լինել սիրեցես՝ յայն-
ժամ արժանապէս իսկ հաղորդ լինե-
լոց ես երկնահրաշ փառացդ : Այլ
կայ եմ յերկնուստ աստի . զի խոստա-
ցար բերանովդ իսկ , կամակար յօժա-
րութեամբ խաչ 'ի յուս դնալ ընդ
անձուկ շաւիղ երկնատար եւ ընդ
նեղ դուռն խաչարհաբեր վշտաց ,
արդ առանց այտցիկ՝ զհանդիստ
խնդրես :

Եւ արդ՝ զայտոսիկ լուեալ յինէն
քաջալերեաց յանձն քո , սիրաբար
գրկեա զխաչն , 'ի ներքոյ ծանրու-
թեան նորա՝ ճմլեցո զթիկունս քո-
յին . եւ որ զինուորդ ես գրեալ՝ տի-
րասէր ոգւով գնա զհետ զօրավարիդ
յաղթական եւ զտեսութիւն հրաշի-

ցըղ ծածկեալ ի թերահաւատ ժողովրդէն որպէս պատուիրէ քեզ հաճոյական որդեակդ իմ :

Անչ այլ տեսանես զդա կրկնակի փառօք յարուցեալ եւ երեւեալ քեզ ի լեառն Գալիլեա՝ եւ ծանո ապա բարձրագոյն քարոզութեամբ խորայլեան անլուր ազգին . թէ չէ վարդապետն մեր Յիսուս՝ Եղիա կամ Յովհաննէս մկրտիչ եւ կամ մի ոք ի մարդարէից . այլ տէր եւ արարիչ նոցին եւ նոյն ինքն Մեսիա փրկիչ եկեալ աշխարհի . զոր տեսաք մեք իսկ աջօք զտիրական փառս նորին ի լեառն Թափօր . որում ոչ միայն Եղիա , այլ եւ Մովսէս . յոր պարծիք դուք , իբրեւ ծառայ կացեալ առ նովաւ աղերս արկեալ թախանձէին զբարերարին կամս ներել քաղցրութեամբ ապաշնորհութեան ձերում . որ հանդերձեալ էիք յայնժամ վառախորհուրդ մտօք զտէրն փառաց ի խաչ հանել :

Իսկ արդ փոխեալ զդէմս բանից , որ առ Պետրոս եւ առ ձեզ դարձուցանէ , հանդիսասէր ժողովուրդք , եւ զնոյն իրաւացի յանդիմանութիւն Պետրոսեան բանից՝ եւ ի լսելիս մեր հնչեցուցանէ ի վերուստ անտի հայրական բարբառն , թէ բարւոք եւ անձկալի է մեզ ըստ փափագանաց զմայլեալ աշակերտին ընդ Քրիստոսի լինել յաւէտ եւ տեսութեամբ նորին անճառ փառաց հրճուիլ յարազուարճ ուրախութեամբ : Իկայք ապա զխաչն այն , որ փառաց է առ ի յոժարափրատ բարձեալ սիրով ընթացուք զնին նախաշաւիղ հետոցն Քրիստոսի ի Գողգոթա . զի չէ եւ չէ հնար առանց չարչարակից լի

նեղոյ նմին՝ հաղորդ լինել այսմ երանաւէտ փառաց :

Իթէ տենչալի է յոյժ մեզ ամենեցուն ելանել յերկրէ աստի յիմա նալի Թափօրն երկնից ի լեառն սուրբ . ապաքէն պարտիմք քրտնահար վաստակաբեկ տաժանիլ ընդ զառ ի վեր ճանապարհ կենցաղոյս այս եւ բոկանի ոտիւք կոխեացուք քաջութեամբ զիշալից ուղին որ առաջի կայ մեզ եւ այնպէս արիւնահոս վերաւորեալ դարչապարօք՝ դարձցուք յերեսաց պատերազմէ աշխարհիս առ զօրագլուխն հաւատոյ Յիսուս եւ անդ ցուցեալ նմին զնշանս վիրաց՝ առցուք զպսակն յալթութեան եւ արժանացուք իսկ յանդիման տեսանել յայնժամ , ոչ իբրեւ յերկրաւոր լեառն Թափօրական ըստ Պետրոսեանց օրինակի զառհաւատ չեայ խտեսին փառաց ահաւորապէս նշմարել , այլ զուարթ աներկիւղ զլի պատարուն ճոխութիւն փառացն Քրիստոսի բացահայեաց աջօք նկատել . որ յայտնեցոյ է իսկ ի վերջնումն աւուր , որում սպասեալ մընամք յուսապատար խնդութեամբ լցեալք : Իւ գիտեմք ստուգապէս , յորժամ յայտնեսցի նման նմա լինելոց եմք . եթէ յաշխարհի աստ ըզնմանութիւն նորին յանձինս բերեալ ուսցուք հեզ եւ խոնարհ լինել սրբտիւ , ներել եղբօրն յանցանաց . աղօթել ի վերայ նեղցացն սիրել զթշնամիսն եւ միանգամայն կառարել զամենայն պատուիրեալսն ի նրմանէ եւ վարկանել զմեզ ծառայ անպիտան :

Այլ ի տօնի մեծի աւուրս՝ եւ ի վերջ բանիս՝ այս եւս յուշ լիցի

քեզ, ով եկեղեցիդ Հայաստանեայց,
թէ որպէս երբեմն առեալ զըսօսա-
տենչ մանկտին ելանէիր խուռն բազ-
մութեամբ 'ի շատաջուր եւ ծաղկա-
լից լեառն Հաճապիվանու . յորում
մանկունք նախարարացն ըստ նմա-
նութեան սակի՝ ջրասէր բարոյիւք ըզ-
հանդէս իմն ջրախաղաց կատարէին
սրբակերով 'ի վերայ միմեանց եւ փուն-
ջս վարդից եւ յայլազան ծաղկանց
կապեալ՝ նուիրէին անշունչ կողմն
գարշեկեաց :

Իսկ մէք , որ խաղացեալ 'ի ջուր
մկրտութեան յաւազանին Եփրատայ
Գրիգորին ձեռամբ՝ որդիացաք Հօ-
րըն երկնաւորի նոր կրկնակի ծննդ-
եամբ հրաշագործ հոգւոյն , որպիսի՞
ինչ նուէր մատուցուք տեառն 'ի
մեծահանդէս տօնիս : Գլխեմ, զինչ
հաճոյէ, ընդ երկրաբոյս վաղածառամ
վարդիցն՝ զանուշահոտութիւն ծաղ-
կեալ վարուց աստուածսիրութեան
եւ զաներկբայ հաւատ առանց կեղ-
ծաւորութեան հանդերձ առաքինա-
կան գործովք . ընծայեցուք Քրիստո-
սի փրկչին մերոյ . եւ փոխանակ տաղա-
ւարցն Պետրոսի՝ զայլ իմն մաքուր տա-
ղաւար կազմեցուք նմին զսիրտ հեզ
եւ զհոգի խոնարհ . յոր եկեալ հան-
գիցէ ինքն հանդերձ հարբ եւ հոգւով
սրբով անբաժան միաւորութեամբ :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՆԿԱՐԱԳԻՐ
ՍՈՒՍՔԻՆՈՒԹԵԱՆ

Երկնից կամարին ներքեւ կը պար-
ծի արեգակն իրեն համատարած լու-
սով եւ գեղեցիկ շառաւիղներով .

բայց երկրիս վրայ ալ աւելի կը պար-
ծենայ սքանչելի ու գերազանց առա-
քինութեան արեւը , որ իր լուսա-
փիւռ ցոլմունքը զինքը սիրող աչքե-
լու առջեւ . քաղցր եւ զմայլելի ը-
րած է եւ ամենէն առ հասարակ ան-
համեմատ գովութիւնը ընդունելով՝
անոնց սիրտը եւ արժանաւոր յար-
գանքը իր վրայ գրաւերէ մեծապէս :
Այնչափ պայծառ է իր լոյսը, մինչեւ
անգամ խաւարին կռապաշտութեան
դարուն մէջը չի ծածկուեր . կը գանձ
զինքը պաշտպանող ու ջատագով Սու-
կրատ մի եւ ուրիշ բարոյասէր փիլի-
սոփաները, որոնց բերնով ու իրաւա-
ցի դատաստանով վճռել կուտա .
« Թէ առաքինութիւն է գովելի եւ
մոլութիւն պարսաւելի » : Այս ճշմա-
րիտ վճռին հետեւելով մի եւ նոյն
ժամանակներու մէջը հազարաւոր
մարդիկը առաքինութեան սքանչելի
ձիրքերը ձեռք բերին . որով աշխար-
հիս մէջը գեո իրենց անունը կը փայ-
լի յիշատակութեամբ . եւ յետնորդ-
ներուն ալ յայտնի քարոզութեամբ
աւանդ թողուցին ամէն բանէն՝ ա-
ռաքինութիւնը գերազանց բռնել :
Ինչպէս Արեւոդայոս Սովետին կշռոյն
քովը՝ բոլոր աշխարհիս ոսկիները
փոքրիկ առաքինութեան մը հետ
բաղդատելով՝ հաւասար չեկաւ :

Առաքինութեան մշտնջենաւոր լոյսը՝
խիտ քաղցր ու փափաքելի էր ըն-
չատեաց կարասաբնակ Գիողիմէսին
քան Աղէքսանդրին մեծամեծ գան-
ձուց խոստմունքը : Սակրատէս մե-
ծանուն փիլիսոփայն զիւր անձը այն-
չափ նուիրած էր առաքինութեանը,
մինչեւ անգամ իւր առաջին բնու-
թեան ժանտութիւնը , որ արտաքին

դժնեայ տեսքէն կը կարծուէր. կըցաւ ուղղել եւ գեղեցկացնել եւ մոլութեան բռնութիւնը՝ առաքինու թեան սանձով զսպել. ինքն ալ կը վկայէ իրեն համար. «Թէ ժանտ եւ մոլի էր բնութիւն իմ. բայց ես իմաստասիրութեամբ յաղթեցի»։ Բնութիւնը թէպէտ աղուոր տեսքը չէր տուած իրեն, այլ ընդ հակառակն չարագուշակ կերպարանք մի, սակայն ինքը իր արտաքին դէմքին վկայութիւնը՝ ներքին բարոյականութեամբ սուտ հանեց եւ բնութեան թերութիւնը՝ որ միայն բարի դէմքն էր, իմաստասիրութեամբ եւ առաքինութեամբ լցոյց, ինչպէս կըսէ առած, Թէ գեղ մարմնոյ չեա ինձ բնութիւն, մտօք ընում զայն թերութիւն։ Նա եւ իւր կինը՝ երբոր մեռնելու վճիռ եղաւ Սոկրատին վրայ՝ բողոքեց, Թէ զուր տեղ կըմեռնի երիկը. անատենը կշտամբեց զինքը Սոկրատ այս անմահական խօսքովը, Ի՞նչ կըսես, ո՞վ կին դու, կուզէիր որ չարագործաց նման յանցանքով մեռնէի։ Տես միանգամ առաքինութեան մեծութիւնը. որ զինքը սիրող ոգինը դէպ ՚ի մահ կըքաջալերէ եւ պարծենալ կուտայ անմեղութեամբ մեռնելուն վրայ։

Ասոր նման ուրիշ նախնի շատ իմաստասէրները, որոնք բնական աղօտ լուսով միայն քաջ կարացին առաքինութեան գերազանցութիւնը ճանչնալ, գործքով ու բանիւ բոլոր աշխարհի քարոզեցին։

Բայց մէք, որ աւետարանին եօթնաշահեան պայծառութեամբ լուսաւորուած եմք. որքան պէտք է մեզի նոյն առաքինութեան յարգը լաւ ճանչ-

նալ ու հետեւիլ։ Աթէ նախնի հեթանոսական փիլիսոփայք, որոնք անյոյս էին երկնաւոր արքայութենէն, այնչափ սիրեցին առաքինութիւնը, իբրեւ մի միայն մարդկութեան վայելուչ եւ սեփհական գործը. ապա որքան արժան է մեզի բոլոր սրտանց սիրել առաքինութիւնը որուն փոխարէն բազմապատիկ վարձատրութիւն պիտի ըլլայ երկինքը ու չէ թէ մեռնելէն ետքը՝ անյոյս կը կորնչիմք հեթանոս փիլիսոփայից նման։ Աւետարանին ցըցուցած առաքինութեան ճանապարհը՝ խիստ նեղ եւ անձուկ է, կը նմանի չերակէտին պատահած երկճիղ ճամբային. մէկը՝ դէպ ՚ի զառ ՚ի վեր, աւագուտ եւ դժուարին միանգամայն փուշերով պատած. իսկ միւսը՝ լայն ու ընդարձակ է, սօսկներուն հովանեօք զարդարուած, անուշահոտ ծաղիկներ բացուած կը բուրեն. հեշտութեան օրիորդն ալ ծայր նստած՝ զամէնքը կըհրաւիրէ դէպ իրեն ու զած ընդարձակ հեշտալի ճամբանը երթալ։ Աւաղ, մարդկային բնութիւնն ալ միշտ հակամէտ ըլլալով դէպ ՚ի չարը՝ անմըտութեամբ կըխաբուի սոյն հեշտութեան օրիորդին հրապուրանքէն. եւ չի մտածեր թէ այն զուարճալի ճանապարհին ծայրը վերջին կորուստն է. եւ միւս դժուար կարծուած ճանապարհին վախճանը՝ յաւիտենական երանութիւն է։

Ուստի քաջութեամբ պէտք է յաղթել ամէն դժուարութեանց ինչպէս շատ արիասիրտ մարդիկները՝ նոյն հրապուրիչ հեշտութեան օրիորդէն իրենց աչքը մէկդի դարձուներով՝ առաքինութեան փշալից ճամ-

բայէն դէպ ՚ի երկինքը գնացին եւ հիմայ երկնային գաւառին մէջը կը վայելեն անվախճան ուրախութիւնը, որ միայն առաքինեաց համար պատ-
րաստուած է, որոնք արիութեամբ կը պատերազմին աշխարհիս հետը եւ կը յաղթեն համբերութեամբ այն ա-
մէն հեշտութեանցը, որոնց վայելու-
մն կը զգրկեն զմարդը երկնային բար-
եաց մշտնջենաւոր երջանկութենէն:

ՏԻՐԱՅՈՒ ՄԱՆՈՒԿ ԿԵՍԱՐԻՈՅ
ՖԵՆԷՍԷ ԳԻՒԴԱՅԻ

ԴԵՍՏԻՆԵՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՏԱՅ ԱՆՄԻԱԿԵՐՊ
ԸՆԹԱՏՔԻՆ ՎՐԱՅ

Արդարեւ ազգային դպրոցներուն առ հասարակը՝ տարբեր ու անմիա-
բան ընթացքն է, որ մեծապէս պատ-
ճառ կը լայ գրաբառ լեզուին չի
ծաղկելուն եւ օր է օր յառաջ չեր-
թալուն: Աստի ասոր համար շատ
անգամ ուսումնասէր անձանց բեր-
նէ միշտ գանգատներ կը լսուի. թէ
ի՞նչ է արդեօք ստոյգ պատճառը, որ
մեր հայրենի պատուական լեզունը՝
այն աստիճան չի զարգանար յառա-
ջադիմութեամբ, որչափ որ կը փա-
փազիմք եւ բաւական ժամանակ ե-
ղաւ. որուն մէջը կը յուսայինք, որ
կը տրիճ երկտասարդական վայելուչ
հասակով մը բարձրանար. բայց, ո՛հ,
կը տեսնամք զինքը դեռ մանկութեան
փոքր հասակին մէջը: Աշակութեան

կողմանէ ի՞նչ պակասութիւնը ունին
դպրոցական պարտեզները, որոնց բա-
նական տունները՝ անխնայ աշխա-
տութեամբ մը կը մշակուին: Այս-
կամ ընկերութիւնները իրենց սր-
տին աղբիւրին ալը ազգասիրու-
թեամբ բացած՝ առատ առատ ջուր
կը վազցնեն պարտիզին մէջը ծարաւ-
ցած նորաբուսիկ տուններուն. եւ
ամենեւին չեն խնայեր անիրաւ մա-
մօնայնը՝ մատաղերամ մանկութիւններուն
համար մսխելու: Արժարանաց
չէնքերը՝ գեղեցիկ ու յարմար, իւ-
րաքանչիւր ուսմանց առանձին սե-
նեակները դասատուութեան հա-
մար որոշուած, վայելուչ գրասե-
ղանները յարմարադիր կարգով շար-
ուած. ազգային եւ օտարը բազմա-
տեսակ մատեանները դրանոցներուն
մէջը պատրաստը. այսպէս ամէն բանը
տեղն ՚ի տեղը եւ համարեա թէ գը-
խաւոր պակասութիւն մը չունին:
Հապա ի՞նչ է պատճառը, որ վարժա-
րանները՝ գանդաղ ու յամրաշարժ
ընթացք մը ունին հայրենի լեզուին
ընդարձակ ու երկար սապարիսին մե-
ջը. երբ պիտի հասնեն իրենց նը-
պատակին, որ Մասիսին տակն է. ու
յաղթութեան մրցանակն առնեն եւ
խառնաձայն շփոթ լեզուններէն փախ-
չելով՝ այն մեր հայրենասէր Հայկայ
պէս՝ նորէն ալեծաղիկ ծերունուոյն
գիրկը գլիմել եւ մոռցուած նախա-
բարբառ լեզունը՝ կրկին անգամ
համարձակ խօսիլ:

Այո, ազգասէր հետաքրքիր, սր-
ամէն բաները, զորոնք յառաջ բե-
րիր, յիրաւի վարժարանաց համար
պատշաճաւոր պիտոյքներ են. բայց
կարծեմ թէ ուրիշ քանի մի ամենա-

հարկաւոր պէտքեր ալ կան, որոնք գրեթէ դպրոցի մի յառաջանալուն՝ բուն խակական առիթներ են. որոնց մէ այս անգամը՝ մէկին համար միւսին փոքր ինչ կը դրեմք այս յօդուածին մէջը, ուրիշ ատենը կը թողուի միւս առիթները գրելու:

Յիրաւի, վերը զուրցեցիր թէ՛ Հայկական դպրոցներուն պարտիզին մէջը՝ խնամոց-վտակները առատ կը վազեն. բայց ինչ օգուտ անկէ, սիրելի, երբոր ջուր տըւողը կամ տունը կերը դարմանող մշակները՝ զանազան կերպերը կը բանեցունեն եւ ամէն մէկը՝ առանձին եղանակ մը բռնելով են ու դպրոցական օրինաց առաջ նորդութենէն թիւրերովը՝ իրենց ուզած ճանապարհէն կը քայլեն եւ առանց իրաւացի ընտրութեանը՝ կը հետեւին. մէկը՝ Չամչեանինը, միւսը՝ Չալըխեանինը, մէկը՝ Հայր Գաբրիէլինը, միւսը՝ Հայր Արսէնինը, մէկը՝ տէր Մեսրոպինը՝ միւսը՝ Պէշտըմալճեանինը՝ եւ այլ ուրիշ տեսակ համառօտ քերականութեացը: Արդարեւ սոոյգ խօսելով՝ այս քաջահումուտ ու մեծահանճար հեղինակներուն ջանասիրութեան արդիւնքը՝ արեւ ժանապէս գովելի է, որ Հայկական լեզուին կերպ կերպ դարձուածոց ճոխագոյն ոճը՝ հաստատուն եւ հարուստ կանոններով՝ դիւրացուցին. որոնց աշխատասիրութեան նպատակը մի եւ նոյն է, այսինքն առաջնորդութիւն մը ընել Արամեան մանկուոյն մինչեւ Մասիսի ստորոտը. ուր որ հայրենի լեզուին նախադուռն ու խանձարուրքն է: Բայց սակայն թէ որ մանկիւնները դաս դաս բաժնելով՝ յանձնենք այս առաջնորդող հեղի-

նակներուն դէպ ՚ի Այրարատ տանելու. յայտնի բան է, որ իրարմէ խիստ անադան կամ շուտ պիտի հասցունեն նպատակին: Սակայն զի մէկը, խիստ բարձր լեռներուն վրայէն տանելով՝ պիտի յոգնեցնէ սաստիկը դարուներ հանելով իջցունելով. միւսը՝ երկարաձիգ ձորերուն մէջէն ուր ուր դառնալով, մէկն ալ ընդարձակ դաշտերէն գոյնգոյն գեղեցիկ ծաղկանց մէջը զբօսեցնելով երկար ժամանակ հազիւ կը հասցունէ տեղը. եւ միւսն ալ թէպէտ օդին վրայէն արագաթեւ թռչունի մի պէս շուտ Մասիսի գլուխ կը հասնէ, բայց դաշտային երկար ճամբանը՝ հայկախօս պերճ լեզուին բիւրատեսակ ծաղկանց անուշահոտ բուրմունքէն զուրկ կը թողու մանկուոյն կիրթ ակորժակը:

Մեր միտքը այս տեղը քերականութեանց վրայ երկար դատաստան ընել չէ. հապա միայն այս ըսել կուզեմք, թէ խիստ տաժանելի ու դժուարին է մատաղ եւ նորակիրթ աշակերտացը, այսպիսի կերպ կերպ ճամբայով քալեցնել հայերենի ուսման մէջը: Պարզ օրինակով մը հաստատենք մեր կարծիքը. թէ որ ճամբորդը իր ուղիղ գիծէն այս կողմ այն կողմը շեղելու կամ ծռելու լայն, յայտնի է որ ճամբան կը երկարի ու միանգամայն կը ծանրանայ վերան եւ իր նպատակին անադան կը հասնի:

Սակայն ալ աւելի աղէկ կը լայն դռնուած քերականութեանց մէջէն ընտրել ու որոշել մէկը, որ միւսներէն կատարեալ է եւ դիւրին ու միջատահման ճամբայ մի ունի ընթացքին

կողմանէ . ոչ այնչափ երկար ու բա-
րակ կանոններով ընցուած , եւ ոչ ալ
խիստ համառօտ ու կարճ՝ հայկախօ-
սութեան պարզ կանոններէն միան-
գամայն կրճատուած : Ահա այսպի-
սի բերականութիւն մը զատելով
իբրեւ ուղիղ գիծ մի բռնել զայն
եւ անոր վրայ քալեցնել մանկտնի .
կրտսնաս անատենը փորձով , թէ
ինչպէս առանց ձանձրութեան ու
զուարճալի զբօսանքով մը դէպ 'ի
նպատակ կրկնէն յառաջադիմու-
թեան մրցանակն առնելու : Այս
դրութիւնը չէ թէ մէք մեզէն ա-
ռանձին կարծիքով մը կը հաստա-
տեմք . հապա շատ հանճարաւոր եւ
ուղղադատ միտքեր ալ տոյն դրու-
թեան վրայ հաստատ են եւ շատ ան-
գամ ալ գրելով յայտներեն , թէ
դպրոցաց հայերենի ուսման ընթաց-
քը՝ պէտք է որ մի միայն գիծ մի ու-
նենայ , որուն վրայ ամէն վարժա-
տանց աշակերտները միակերպ հաւա-
սարութեամբ իրենց ուսման քայլը
փոխեն : Վարդական օրէնքը չի նե-
րեր ամենեւին , որ իրարու ներհակը՝
դասատուութեան եղանակմը բռնելու
վը՝ հերձուած ըլլան աշակերտները .
ու թէ որ պատահի մեկունը՝ այս
դպրոցէն միւս դպրոցը երթալու ,
բոլորովին պէտք է զինքը չգիտցողի
տեղը դնել , թէ եւ լաւ սորված ը-
լայ քերականութեան արուեստը :
Վասն զի եթէ նոյն նոր գնացած
դպրոցին կանոնով բան մը հարցու-
նես , իսկոյն խզճուն երեսը մեծ ամօ-
թով կը կարմրի եւ ապուշ մնացածը՝
չի գիտեր թէ ինչ կերպով պատաս-
խան տայ , որովհետեւ հարցման ձեւը
ու եղանակը՝ իբրեւ այլանդակ ու

նորալուր բան մը կերեւան իր ական-
ջին , թէպէտ եւ նոյն բանը՝ առջի
դպրոցին մէջը սորված ու դաս առած
ըլլայ : Այս բանը որչափ որ աշակեր-
տին ամօթ կը բերէ , անչափ ալ անար-
գանաց առիթ մի կը ըլլայ վարժապե-
տաց . որոնք զիրեար կը պարսաւեն ու
վար կը զարնեն իբրեւ անգէտ կամ
անհմուտ քերականութեան արուես-
տին :

Աւելի գէշը ու ցաւալին ալ այս
է , որ շատ դասատուներն ալ իրենց
չինսած առանձին տետրակներով կը
սորվեցունեն աշակերտաց : Այս կերպ
ճամբանը՝ այն մեծապէս օգուտ կը-
նէ , եթէ որ ամէն դպրոցներուն դա-
սատետրերը՝ մի եւ նոյն օրինակաւ
առանց տարբերութեան մը գրուած
ըլլան : Իսկ եթէ ամէն մէկը զատ
ախորժակով մը իրենց հաճոյց համե-
մատ՝ զանազան եղանակաւ դասա-
տետրերը հնարեն , կարծեմ թէ անա-
տենը վարժապետաց կարծիք եւ թի-
ւը որչափ է , այնչափ ալ դասատետ-
րեր պիտի ըլլան , նմանապէս տարբեր
կերպով սորված բազմաթիւ աշա-
կերտները :

Այս է ահա գլխաւոր պատճառ-
ներուն մէկը , որ աշակերտաց մեծ
մասը՝ կատարեալ արուեստին չի հաս-
նելով՝ կէս ճամբան կը մնան եւ թէ
Աստուած մի արտացէ վարժապետը
փոխուելու ըլլայ . ինչպէս որ սովո-
րութիւն է . ալ յոյս չիկայ այնուհե-
տեւ Հայաստանին կեդրոնը հասնելու .
հապա ողորմելի կերպով , տրտում
ու տխուր կէս ճամբայէն ետ դառ-
նալով՝ նորէն պիտի ըսկըսէ արեւ-
մտեան Պօլսոյ ծայրէն դէպ 'ի արեւ-
ելեան դրախտը երթալու : Ասկէց

աւելի ալ ի՛նչ պատիժ ու պատու
հաս կրնայ ըլլար խղճալի աշակեր-
տին, երբոր յաջորդ վարժապետը՝
ինքնահաւանութեամբ դպրոցին օ-
րէնքը կը կոխէ եւ իր նախորդին տա-
րած ճամբայէն ետ կը դարձունէ
զինքը: Ընդ նախորդներուն համար
չեմ ըսեր, որոնք որ լիապէս հմուտ
չլըլալով արուեստին՝ անհաստատ
կամ ծուռ հիման վրայ սկսեր են ի-
րենց դասը. որուն վրայ շինուած
յարմարել կաակած ելի սեպելով՝ ի-
րաւունք կը համարին նոր հաստատ
հիման վրայ շարունակել ուսման շին-
ուածը: Սակայն երբոր նախորդն ալ
իրեն պէս լիալարժ է արուեստին մէ-
ջ եւ գոհ է իրմէն քանիմ աստի-
ճան աւելի, չեմ գիտեր ի՛նչ իրա-
ւունքով առանց խղճմտանաց աշա-
կերտին քրտինքը. արտասուքի փո-
խելովը՝ այնպէս ձեռքէն բռնել ետ
դարձունել. ու Մասիսին ձիւնափայլ
գլուխը՝ անոր փափագով նայած աչ-
քէն՝ կրկին անգամ ծածկել ու հե-
ռացնել: Արով այն մատաղ փափուկ
սիրտը՝ յուսակուր ըլլալով կը մաշի
եւ միանգամայն կը մարի անոր աշ-
խուժ ոգւոյն վառուած կրակը. ու
երբոր յաջողակ ոտքով յառաջ կը խա-
զէ դէպ ՚ի մրցանակն, նայիս որ յան-
կարժ երեսին ապտակ մի զարնելով
ետեւ կը դարձունեն զինքը: Ի՛նչա-
տեն կը կանչէ լալով յուսահատ ա-
չակերտը՝ « ամսոն աշխատանացս,
զոր կորուսի:

Ս ան որոյ անհրաժեշտ պարտա-
ւորութիւն մի է բոլոր պատուելի վար-
ժապետաց. որ մեր հայրենի դեղեց-
կախօս լեզունը վերտօնն ծաղկեցնե-
լու եւ զարգարելու հոգ տանին. որն

որ աւանդ, հայկածին մանկանց շա-
տերու բերնի մէջը դեռ խամրած ու
թուումսձ է: Մանաւանդը դպրո-
ցական բարեկարգ օրէնքը եւ ազ-
գասիրութեան եռանդուն սիրտը այն
կը պահանջէ անոնցմէ. որ այն պար-
սաւելի ախտէն հեռու մնալով՝ ա-
մէնքն ալ առանց խտորելու միայն
ւիղ առաջնորդութեամբ տկարաբայլ
մանկուոյն ձեռքէն բռնելով՝ յաջո-
ղութեամբ հասցունեն այն ցանկալի
գրախօսին գրանը. ուսկից բնատուր
լեզունն անդրանիկ բարբառը լսուե-
ցաւ նախաստեղծին բերնէն:

ԵՐԽՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՎԵՆՏԱԳՈՒՑ
ԱՐԷՆՍՏԻՆ ԱՐԱՅ

Թէ որ Եւրոպիոյ բազմատեսակ
ճարտար արհեստաւորներ հանդէս մը
կազմելով իրաւունքը ունենան ամէն
մէկը պարծենալ իրենց զարմանալի
գիւտերու վրայ, ամենէն աւելի ի-
րաւունքը ունի պարծենալու հոգա-
վատակ գեղջուկը, որուն օրինակ եւ
հեղինակը նախապէս ինքն Աստուած
եղաւ երբոր իր ձեռօք տնկեց այն
վայելուչ գրախօսը նախաստեղծ մար-
դուն համար. ու պատուէր տուաւ
անոր տունները մշակել գուցէ ա-
ռանց չափազանց քրտինքը թափելու
գիւրակերպ աշխատութեամբ մը:
Իայց յորժամ Աստուծոյ պատուէր
չի պահելով գրախօսէն դուրս ելաւ՝
նոյն հրամանը սատիկ կերպով վըճ-
ուեց Աստուած անոր վրայ, որ երեսին
ու ճակտին քրտինքով իր հացը ճա-
րէ եւ ուտէ: Ըստ անիծից վճիռը
ջուրի նման Ադամայ գլխուն վրայ

Թափուելով՝ իջաւ անկէ ծնած բո-
լոր զաւակներուն վրայ ալ: Այս
պատճառաւ կը տեսնամք, որ երկրա-
գունդիս վրայ ջուրէն աւելի մար-
դիկներուն երեսէն քրտինքներ կը
վազեն. ամէն մարդու ջանքն իրեն
բերանին համար է ինչպէս կըսէ Իմաս-
տունն. աշխարհիս վրայ չի կայ մէկը, որ
առանց քրտինքը Թափելու՝ կտոր մի
հացը իր բերան տանի: Այլ թէ մինակ
արեւուն առաջ կեցած հողագործին
արեւակէզ երեսէն նոյն քրտինքը կը
վազէ, հապա Թագաւորները, իշխան-
ներն անգամ, որոնք փափկասուն
կենցաղավարութեամբ շքեղ պալատ-
ներու մէջը կը բնակին, դժուարին
եւ դառն քրտինքը կը Թափեն աշ-
խարհի կառավարութեան համար եւ
այնչափ հոգածութեամբ կը տազնա-
պի սիրտերնին, մինչեւ ոսկորնին ան-
գամ կը հալի կը մաշի մտաւորանջու-
թեամբ: Հատերն ալ պատերազմի
դաշտերու վրայ՝ քրտինքի տեղը ար-
իւնը կը Թափեն. նոյն հացը կուշտ
ուտելու համար՝ արիւնով կը մշակեն
երկրիս հողը, որ Աստուած ամպերուն
ցողով կուռգանէ:

Իսկ զանազանութիւնն այս է,
որ ոմանք խելքով եւ քիչ աշխատու-
թեամբ իրենց հացը առատ կը վա-
ռելեն եւ կուշտ կը վայելեն. ոմանք
ալ դառն եւ դժուարին աշխատու-
թեամբ քիչ մը հացիկը հազիւ իրենց
բերան կը հասցունեն դողդոջուն ձեռ-
քով եւ խնայելով կուտեն որ չը պակ-
սի իջ տեսնամք ահա, որ խելացի եւ
կրթեալ ազգերը՝ որչափ դիւրակեաց
են եւ երջանիկ կեանք մը կը վարեն
աշխարհիս վրայ. բազմախորտիկ սե-
զանին բոլոր նստած կը վայելեն ա-

ռատ բարիքը եւ կուրախանան իրենց
ընտանիքներով: Իսկ այն ազգերը,
որ քաղաքակրթութեամբ եւ ուսմամբ
դեռ լուսաւորուած չեն, մտածէ
մէյմը տես, թէ որքան խիստ անտանե-
լի տառապանքով, չափազանց աշխա-
տութեամբ, հեծելով հառաչելով
կուտեն ցաւոց հացը: Հատերն ալ
իրենց հայրենիքէն հեռացած, սիրելի
ընտանեաց երեսէն զրկուած, օտար
հողերուն վրայ կը Թափեն քրտինքը
Թշուառ պանդխտութեան մէջը:
Այլ խօսքով՝ մեր Եղիշէ հօրն ըսա-
ծին պէս՝ գիտութեան աչքը ունե-
ցող ազգերը՝ երջանիկ կեանք մը
ստացեր են. իսկ ընդ հակառակն՝ այն
ազգերը որ անգիտութեամբ աչքեր-
նին գոցերեն, նոյն երջանիկ եւ կա-
տարեալ կեանքէն զրկուած են:

Աշխարհ բոլոր կը զարմանայ Եւ-
րոպայի ազգաց ճարտարութեան վը-
րայ, անբեր եւ ապառաժ երկիրներու
մէջը կը բնակին եւ նեղ սահմաննե-
րու մէջը փակուած են. բայց հարկին
բռնութենէն ստիպուելով՝ այնչափ
ճարտարութեամբ կը մշակեն նոյն աւ-
պարդիւն կարծուած հողը, մինչեւ
մէկին տեղը՝ երեսուն կամ վաթսուն
կը քաղեն բազմապատիկ յաւելուա-
ծով: Իսկ արեւելեան ազգերը, որոնք
աւելի ընդարձակ եւ բարեբեր եր-
կիրներու մէջը կը բնակին. սակայն
իրենց անհոգութեամբ այն քաջաբե-
րուն հողերը, այն ջրաւէտ դաշտեր
եւ պարտեզները անմշակ թող տա-
լով՝ կը կարօտին ուրիշ հացին եւ
կը ցանկան օտար ծառոց պտուղնե-
րուն:

Անաւանդ գեղեցիկ եւ դրախ-
տաւայր Հայոց սահման, որ գիտես

Թէ Աստուած մինակ նոյն մասն երկ-
րագունդին զատելով՝ Հայկայ սիրելի
որդւոց բաշխեց. որ մշակեն եւ առա-
տնութեամբ վայելեն անոր բարիքը :
Ափսոս , այս Աստուծոյ պարգեւած
բարիքին յարգը դեռ չի ճանչնար
Հայաստանեայց խեղճ Ժողովուրդը .
անհոգութեամբ Թող տուերէ այն
ռակեքոյս հողերը առանց մշակու-
թեան , որ կարգացած ամալի մնացեր
են : Չի դարմաներ այն պարարտ
դաշտերը Սողոմոնի ըսածին պէս որ
արածան ձորձաբեր ոչխարները , կաթ-
իւղ , պանիր եւ բուրդ ընծայեն իրեն
առատութեամբ : Իր մերկութիւնը
պատասպարելու համար՝ բամբակ եւ
կանեփ ցանելու չաշխատիր , ուստի
կարօտ կը մնայ Եւրոպայի գործուած
բարականիւթ եւ գիւրամաշ կտանե-
րու : Թող կուտայ այն ազնիւ եւ
կակուղ այծու մազերը եւ ոչխարի
բուրդերը , որ Եւրոպայ տարուին եւ
պատուական չուխայ գործուելով՝
կրկնապատիկ գնով իրեն ծախուին :
Մեծ ամօթ է , Եւրոպայի շաքարով իր
բերանը քաղցրացնել , երբոր մեծա-
մեծ ճակնդեղի արտերը կրնան մը-
շակուիլ իր բոլոր գաւառներուն մէ-
ջը . մանաւանդ Վասպուրական գա-
ւառին , որոնք աւելի քաղցր են շա-
քարի նիւթով :

Հայաստանի տուններ եւ արտերը
ջրելու համար՝ աւելորդ են Եւրոպայի
մեծամեծ ջրհան ըստած գործիքներ ,
վասն զի յորդագոյն գետերը եւ բիւ-
րաւոր վտակներ բաւական են ջուր
տալու ծարաւցած երկրին եւ կարող
են գործարանաց մեծամեծ մեքենա-
ները առանց կրակի դիւրին կերպով
դարձունել : Մանաւանդ այն Հա-

միրամայ մեծ առուն , որ քառասուն
միաշար իրարու քով շինուած ջրա-
ղացները կը դարձունէ : Ափսոս , որ
այս ջուրերը ամէնեւ ալ կը վազեն կեր-
թան զուր եւ անօգուտ ծովը կը թա-
փին :

Քանի քանի կենցաղօգուտ եւ
շահաւետ բաներ կան , որոնք խիստ
գիւրութեամբ յառաջ երթալով կը
ծաղկին Հայաստանին մէջը եւ ողոր-
մելի աղքատիկ Ժողովուրդոց հարստու-
թեան եւ գիւրակեցութեան միջոց
կըլլան ու մեր ազգին նիւթական վի-
ճակը՝ կատարեալ երջանկութեան
կը հասցունեն :

Այս տեղը իրաւունք ունիմ պար-
ծենալ իմ հայրենակից քանի մի վա-
ճառական ազնիւ եւ ազգասէր ան-
ձանց վրայ . որոնք միասիրտ եւ միաբան
հայրենեաց օգուտը մտածելով՝ ընկե-
րութիւն մը կազմեցին քանի մը տա-
րի յառաջ եւ դովելի ջանքով կարող
եղան Պրուսայէն Թիթենի տունները՝
վան քաղաքի այգեստանեաց մէջը
փոխադրելու : Որոնց այս առաքինի
մշակութեան արդիւնքը՝ փոքր ինչ
պիտի վայելեն այս տարի իբրեւ երա-
խայրի պտուղը եւ յուսով արտերնին
պիտի լեցուի աւելի արդիւնք վայե-
լելու ազագայ Ժամանակին մէջը :

Ամէն մարդ ամէն բերան կը վը-
կայէ , որ Եւրոպայի բոլոր նիւթական
երջանկութիւնը՝ ընկերութեամբ ման
ուած անխզելի թելէն կախուած է :
Այն ահագին զարմանալի մեծագոր-
ծութիւններ , ճարտարագիւտ ար-
ուեստական շինուածները , որոնք պար-
զամիտ մարդու մը աչքին՝ մէյմէկ
հրաշից հանդէսներ կը ձեւանան եւ
բերանաբաց ապուշ մնալով կը կար-

ծէ թէ Եւրոպայի մարդիկը՝ բնու-
թենէ վեր հրէշներ են եւ միայն ա-
նոնց գլխուն եւ ըզեղին մէջը կը պա-
րունակին դերազանց խելքեր եւ
ճարտարութիւններ :

Այսպիսի կենցաղօգուտ շահեր
մտածող գլուխները երբ պիտի ծնա-
նիս , նոյն Հայաստան , եւ երբ պիտի
միանան մեղուաշան անդամները՝
կարօտեալ ազգի մի բերանոյ մեղրի
նման քաղցր բարիքները նուիրելու
համար : Այո , Հայաստան , քու
փափագածդ բարիքներուն եւ կոր-
սնցուցած երջանկութեանդ շուտով
պիտի հասնիս , թէ որ այս քաղաքա-
կան ընկերութեան մասին Եւրոպայոյ
նախանձը սրտիդ մէջ վառես եւ մը-
շակական ընկերութեան ձեռք զար-
նես : Պէտք չէ քեզի ահագին շու-
քենաւերու տորմիլները կազմել եւ
ընդարձակ ծովերու անդունդները
պատասխելով՝ աշխարհէ աշխարհ վա-
ճառականութեան երթալ . պէտք չէ
քեզի առ այժմ լեռները ծակելով ,
բլուրներ հարթելով երկաթուղիները
կազմել եւ սաստիկ արագութեամբ
կառքերը՝ առանց ձիու շողիով քա-
լեցնել . հապա քեզի հիմակու հիմա
պէտք է միայն , որ փոյթ ունենաս
ձեռքդ եղած բարեբեր երկիրները
մշակելու , եւ երկրագործութեան
մեծաշահ ընկերութիւնները հաստա-
տելու . նախապէս զիւրին եւ հնարա-
ւոր բաները՝ ձեռք բերելու . մանա-
ւանդ այն բաները , որ կարեւոր պի-
տոյք են ազգի մը բարեկեցութեան ,
քան թէ լոկ զուարճութեան կամ
զբօսանալոյ միջոց մը : Կարծա չէ Հայ-
աստան գոյնզգոյն ծաղիկներու սեր-
մերը հեռու տեղերէն տանելով՝ իր

մէջը տնկել . վասն զի իւր բոլոր լեռ-
ներուն վրայ , աղբերաց եւ վտակնե-
րուն եղերքը՝ ինքնաբոյս ինքնամշակ
ծաղիկներ շատ կան , որոնք բաւական
են զմայլելի տեսարան մը երեւնալ
ճեմողներուն աչաց :

Ուրեմն , ո՞վ դուք հայկազուն իշ-
խանք , որ Հայաստանեայց զանազան
գաւառներու մէջը կը գտնուիք , ձեր
անհրաժեշտ պարտքն է . , որ Հայոց
աղքատիկ ժողովրդեան ողորմելի վի-
ճակին վրայ նայելով՝ սիրտերնիդ շար-
ժի անոնց խեղճութեան դարման
գտնելու . որ առաջին եւ գրեթէ մէկ
հատիկ դարմանը եւ զանոնքը ներ-
կայ խեղճութենէն ազատող ճարը՝
մշակութեան արհեստն է . թէ որ ըն-
կերական միաբանութեամբ ծաղիկե-
ցնելու փոյթ ունենաք . ասով նախ
ձեր անուն կը պայծառանայ ազգա-
սիրաց կանառներուն մէջը . եւ երկ-
րորդ՝ հայրենեաց վերանորոգութեան
պատճառ կը ըլլաք մեր առաքինի նախ-
նեաց հետեւելով :

Ուստի եթէ մեր այս փոքր յուր-
դորանքէն չջարժի ձեր ազգասէր սիր-
տը՝ այսպիսի շահաւէտ եւ կենցաղօ-
գուտ մշակութեան ձեռք զարմելու ,
գոն է Սոդոմոնին խրատական ազգու-
թեանէն արթնալու է . , որ սաստիկ
կերպով կըմխէ վատութեամբ քնա-
ցած մարդուն կողը , ու մեծ յան-
դիմանութեամբ կը պարտաւէ զանոն-
քը՝ որ թմրած գանդաղութեամբ մը
իրենց օրերը ծուլութեան քնուն մէ-
ջը կանցունեն եւ երբոր յանկարծ
քիչ մը կը զգաստանան եւ աչքերնին
բանալով՝ կը տեսնան , որ աղքատու-
թիւնը սուրհանդակի մը պէս իրենց
վրայ հասեր ու ծանր բեռան մը

պէս կը ճմլեցնէ իրենց թիկունքը . որուն ներքեւը հեծելով կը հառաչեն ողորմելի եւ թշուառ կենցաղաւարու թեամբ :

Եւ ծանր ու տաժանելի բեռնէն՝ խղճալի ժողովուրդը ճմլեալ թիկունքը ազատելու համար , կը կրկնեմ դարձեալ , ո՞վ հայկազուն իշխանք , ընկերութեան ձեռքով օգնութիւն հասնելու է . եւ մեր հայրենի բերուն հողերը մշակելով՝ գուցէ այն աղքատիկ ժողովուրդը նորէն ճոխանայ ու լեցուի հացով :

Պատշաճ կը համարիմ , այս տեղը Սողոմոնին այն քանի մի խրատական խօսքերը դնել . որ թէպէտ առ հասարակ ամէն գործատեաց մարդոց կը վերաբերի . բայց աւելի մեզի է այս կ'շտամբանքը , որ պարարտ հողերը վատութեամբ կորդ թողերեմք ու զանի մշակելու բնաւ փոյթ չունիմք :

Երթ առ մըջին , ո՞վ վատ , եւ նախանձեա ընդ ճանապարհս նորա . եւ լէր իմաստնագոյն եւս քան զնա :

Զի նորա ոչ գոյ հողագործութիւն եւ ոչ հարկաւիր եւ ոչ ընդ տերամբք է :

Եւ պատրաստէ ամարայնի զկերակուր եւ բազում համբարս զնէ 'ի հունձըս :

Վատութիւն ունի զկանացին , անձըն գործատեաց՝ քաղցիցէ :

Որ թագուցանէ զձեռս իւր 'ի ծոց իւր զուր . եւ ոչ 'ի բերան իւր տարցի զնոսա :

Որ գործէ զերկիր իւր՝ լցցի հացիւ եւ որ զհետ երթայ դատարկութեան . լցցի տնանկութեամբ :

ՅԱՌԱՅԱՅ ՍՈՂՈՄՈՆԻ

ՆՈՐԱՏԻՊ ՏԵՏՐԱԿ

20 ՀԱՆ

Մեծիմաստ Պրուսացի Յովհաննէս պատուելի վարժապետը այս անունով կիսամսեայ տետրակ մի հրատարակելու ըսկսեց Յուլիս ամսոյ առաջի օրէն , քանի մի աղգասէր անձինքներէ եւ իր անխոնջ գրասիրութենէն յորդորուելով : Սոյն տետրակին աշխիւ նիւթոյն ու պիտանութեան համար՝ արգոյ լրագրաց խմբագիրները արդէն հրատարակեցին : Մեր կողմանէ ալ կը փութամք այսչափ միայն ծանօթութիւն տալ յօժարամիտ ընթերցասիրաց . թէ յիշեալ թերթը՝ իր բարոյական գեղեցիկ յօդուածներով՝ մեծապէս օգուտը կընծայէ մարդկային բարուց կը թուութեան համար : Մանաւանդ կը ծոնական մասին մէջն ալ , Քրիստոսական աւետարանին սքանչելի տարածման եւ ուղղափառ եկեղեցւոյ ջատագովութեան վրայ պիտի գրէ հատատուն իրաւախօսութեամբ : Որ թէպէտ քանի մի քաղաքաց ու նահանգաց համար՝ տաճկական լեզուով ստիպուած է շարագրել աղգասէր հրատարակիչն , բայց փափաքելի է նա եւ հայագէտ ընթերցասիրաց բաժանորդ գրուիլ , նախ՝ բարոյական եւ կրօնական օգուտները քաղելու , երկրորդ՝ հիմարիտ աղգասիրութեան պարտքը վճարելու համար . որ ասով աշխատասէր հրատարակիչն ալ այս գրաւորական առպարիսին մէջը շարունակ ընթանալու կարողութիւն ունենայ եւ իր քրտանց փոխարէն արժանապէս վարձատրութիւն ըլլայ :

THE HISTORY OF THE

REIGN OF

CHARLES THE FIRST

IN THE

SEVENTEENTH CENTURY

BY

JOHN RUSSELL

ESQ.

LONDON

Printed by

JOHN STURGEON

AT THE

PRINTING OFFICE

IN

ST. MARTIN'S LANE

1710

ՅԼՆԿ

ՊԱՐՈՒՆԱԿԵԱԼ ՆՒՒԹՈՑ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ատենական ճառ 'ի գերազրաշ պայծառակերպութիւն Տեառն մերոյ 'ի Թափօրախան
լեառն Գալիլեացւոց 17

ԲԱՐՈՅԱԿԱՆ

'Նկարագիր առաքինութեան 25

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային դպրոցաց անմիակերպ ընթացքը 25

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Երկրագործութեան կենցաղօգուտ արհեստին վրայ 28

ՊԱՅՄԱՆՔ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Տարեկան գին 40 ղուռուշ:

Միամսեայ տետրակին 4 ղուռուշ:

Պօլիսէն դուրսը երթալու ճամբուն ծախքը առնողը պիտի վճարէ:

ՏԵՂԻՔ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՏԱՅՄԱՆ

Ի Պօլիս գրավաճառ պարոն Յարութիւնին եւ պարոն Պաղտասարին սենեակները՝ որ 'ի
Մերձան:

Ի Զմիւռին Վանեցի Շահինեան Յովհաննէս պատուելի վարժապետ:

Ի Վարին տէր Ներսիսեանց մեծարգոյ Խաչատուր խան:

Ի Վան Թերլէմէզեան պարոն Մկրտիչ: